

---

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ. Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 338 էջ:

1920 թ. կեսերին և 1921 թ. սկզբներին պատմությունը չար խաղեր խաղաց հայ ժողովրդի գլխին: Դեռ վերջնականապես չէր մարել Սևրի պայմանագրով մեծ Հայաստան ստանալու ակնկալիքը, երբ իրադրությունը կտրուկ փոխվեց, և հայ ժողովուրդը կանգնեց ունեցածն էլ կորցնելու իրական վտանգի առաջ: 1920 թ. աշնանը հայ-թուրքական պատերազմում հաղթանակած թշնամին բռնագավթեց Հայաստանի Հանրապետության տարածքների մի զգալի մասը և հայերին պարտադրեց Ալեքսանդրապոլի նվաստացուցիչ դաշնագիրը, որով Հայաստանը փաստորեն կապիտուլյացվում էր, ամփոփվում շուրջ 30 հազար քառակուսի կիլոմետրի շրջանակներում, փաստորեն զրկվում սեփական զորք ունենալու իրավունքից: Երկիրը, ըստ էության, անցնում էր թուրքական վերահսկողության տակ, և վտանգ էր ստեղծվում ողջ արևելահայության ու արևմտահայ գաղթականական զանգվածների հետագա ֆիզիկական իսպառ բնաջնջման համար: Այդ սպառնալիքը, սակայն, վերացավ Հայաստանի հանկարծահաս խորհրդայնացմամբ, երբ խորհրդային կարմիր բանակը փաստորեն դարձավ հայ ժողովրդի գոյատևման երաշխավորը: Եվ այս անգամ էլ հայ ժողովրդի առջև հառնեց խառնակ իրավիճակից տարածքային նվազագույն կորուստներով դուրս գալու հիմնախնդիրը, որի լուծումը բարդանում էր խորհրդաթուրքական սկսված մերձեցման ու բարեկամության հանգամանքով: Միջազգային բարդագույն իրադրության պայմաններում կնքված 1921 թ. մարտի 16-ի խորհրդաթուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիրն ամրագրեց Կարսի մարզի և Մուրմալուի գավառի անցումը Թուրքիային՝ 20,7 հազար քառակուսի կիլոմետր տարածք, որը չափազանց մեծ կորուստ էր առանց այն էլ փոքրիկ Հայաս-

տանի համար: Խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ հայկական կողմը հարկադրված էր պատմական այդ մեծ անարդարության տակ ստորագրել նույն թվականի հոկտեմբերի 13-ին՝ Կարսի պայմանագրում:

Ինը տասնամյակ է անցել այդ անարդարացի պայմանագրերի ստորագրումից, բայց հայ ժողովրդի սրտում պահպանվել է կորստի ցավը: Եվ պատահական չէ, որ այդ պայմանագրերը միշտ էլ եղել են բուռն վեճերի ու քննարկման առարկա, արժանացել ամենատարբեր գնահատականների ու որակումների, ուստի և հիմնահարցն առ այսօր պահպանում է իր արդիական հնչեղությունը:

Անցած տասնամյակների ընթացքում շատ բան է փոխվել: Պատմության գիրկն են անցել պարտադրված գնահատականները, կադապարված, միակողմանի տեսակետները, ի հայտ են եկել հիմնահարցի վրա լույս սփռվող բազմաթիվ նոր նյութեր ու գաղտնագերծված արխիվային փաստաթղթեր: Եվ ինքնին առաջացել են նոր հարցադրումներ, որոնք հրամայաբար համապատասխան վերլուծություններ, համադրումներ ու ճշմարիտ պատասխաններ են պահանջում: Այդ առումով շնորհակալ աշխատանք է կատարել պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանը՝ ընթերցողին հանձնելով սույն մեկնությունը Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերաբերյալ:

Ամենից առաջ կամենում ենք ընդգծել, որ գիրքը շարադրված է անկողմնակալության դիրքերից: Պատմական փաստերի խորը և բազմակողմանի վերլուծությանը համադրելով առողջ տրամաբանությունը, դատողություններն ու ենթադրությունները, հեղինակը մի շարք կարևորագույն հիմնահարցերի շուրջ կատարել է եզրահանգումներ ու պարզաբանումներ, որոն-

ցից շատերը կարևոր նորույթ են մեր պատմագրության մեջ:

Օրախնդիր և ամեն մի հայ մարդու մտածումներին համահունչ է գրքի ներածականում հեղինակի արտահայտած այն համոզմունքը, որ Հայաստանի Հանրապետությունը՝ իբրև Առաջին և Երկրորդ հանրապետությունների իրավահաջորդ, իրավասու է չճանաչել 90 տարի առաջ ուժով հայ ժողովրդին պարտադրված Մոսկվայի և Գարսի պայմանագրերը ու պահանջատեր լինել իր կորսված հողերին: Պարզաբանելով միտքը, հեղինակն ընդգծում է, որ խոսքը վերաբերում է հատկապես Գարսի պայմանագրին, որովհետև Ալեքսանդրապոլի պայմանագիրն առհասարակ չի վավերացվել, իսկ Մոսկվայինը՝ Հայաստանը չի ստորագրել (էջ 4):

Գրքի ներածության գնահատելի հատվածներից է հիմնահարցի շուրջ գոյություն ունեցող հուշագրական և պատմագիտական գրականության սեղմ վերլուծությունը, որտեղ մի շարք աշխատությունների տրվում են անաչառ գնահատականներ՝ անկախ դրանց հեղինակների կուսակցական պատկանելությունից:

Միանգամայն ճիշտ է նկատում հեղինակը, որ 1920 թ. ապրիլ-մայիս ամիսներից Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի ռազմաքաղաքական շահերի համընկնման պայմաններում սկսվեց մերձեցում և համագործակցություն նրանց միջև: «Ստացվեց այնպես, - գրում է հեղինակը, - որ պատմականորեն թշնամի այդ երկու երկրների շահերը համընկան, քանզի երկուսն էլ պայքարում էին Անտանտի (Համաձայնություն) տերությունների դեմ, որոնց փոքր դաշնակիցն էր համարվում նաև Հայաստանի Հանրապետությունը» (էջ 27):

Հայաստանի խորհրդայնացման գործընթացը ճիշտ ընկալելու առումով գնահատելի է Ա. Հակոբյանի այն դիտարկումը, որ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական կոնֆերանսի նախօրյակին կացությունն այնպիսին էր, որ Հայաստանը լիակատար պարտություն էր կրել, կառավարությունը ճգնաժամի մեջ էր, հասարակության մեջ և կուսակցություններում առաջացել էին քաղաքական խնդրումներ, ուժեղացել էր

խորհրդամետ կողմնորոշումը, իսկ Անտանտի տերությունները լքել էին Հայաստանն ու հայերին (էջ 42):

Շատ կարևոր է հեղինակի հղումը Վահագն Դադրյանի ռուսերեն թարգմանված մի աշխատությունից, որտեղ հրապարակված է քեմալական կառավարության հրահանգը Գարաբեքիին՝ Հայաստանի Հանրապետության և հայության ոչնչացման մասին (էջ 44):

Ա. Հակոբյանը հայտնում է միանգամայն ճիշտ այն տեսակետը, որ կարելի էր Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման պատասխանատվությունը փոխանցել արդեն խորհրդայնացող Հայաստանի կառավարությանը (Հայհեղկոմին), և նման պարագայում շատ բան կարող էր փոխվել հոգուտ Հայաստանի: Այդ առումով նա խստորեն քննադատում է Ալ. Խատիսյանի վարքագիծը և գտնում, որ այն արդարացում չունի, քանի որ նա կարող էր հայտարարություն անել, որ ինքն այլևս - պայմանագիր ստորագրելու լիազորություն չունի:

Հեղինակը միանգամայն իրավացիորեն գտնում է, որ հիմնավոր չէ այն պնդումը, որ եթե Խատիսյանը չստորագրեր պայմանագիրը, ապա թուրքերը մեկ-երկու օրում կգրավեին ամբողջ Հայաստանը (էջ 51, 59-61):

Ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը, հեղինակը գտնում է, որ միջազգային իրավունքի և օրինականության տեսակետից երկու կողմից էլ այն իրավական և օրինական չէր, իսկ Հայաստանի համար ստորագուցիչ էր ու նվաստացնող, որովհետև քաղաքական կախման մեջ էր դրվում Թուրքիայից (էջ 66, 79): Միաժամանակ շեշտվում է նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անկախ նրա իրավական հիմքից, անշուշտ ազդեցություն ունեցել է հայ-ռուս-թուրքական հարաբերությունների և առաջին հերթին Մոսկվայի ու Գարսի պայմանագրերի վրա (էջ 101):

Փաստական հարուստ նյութի նպատակային օգտագործմամբ հանգամանորեն ներկայացնելով Մոսկվայի կոնֆերանսի դիվանագիտական նախապատրաստումը,

Ա. Հակոբյանը կատարում է մի շարք էական պարզաբանումներ: Նա գտնում է, որ այդ ժամանակահատվածում Գ. Չիչերինը ցուցաբերել է հայանպաստ մոտեցում (էջ 114): Ընդգծվում է, որ հենց թուրքական պատվիրակությունը Մոսկվա հասավ, իսկույն առաջ քաշեց երկկողմ՝ ռուս-թուրքական կոնֆերանսի պայմանը՝ պատճառաբանելով, որ իրենք լիազորված չեն Հայաստանի հետ բանակցելու:

Հետաքրքիր տեղեկություն է տրվում այն մասին, որ 1921 թ. հունվարի կեսերին կազմվում է Հայաստանի պատվիրակությունը, որը գլխավորում էր արտգործոց Ալ. Բեկզադյանը: Պատվիրակության կազմում էին Ա. Կարինյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և մեկ տասնյակի հասնող սպասարկող անձնակազմ: Պատվիրակությունը Մոսկվա է տանում տարածքային և սահմանային չափավոր առաջարկությունների չորս տարբերակ (էջ 144):

Եզրակացություն է արվում, որ կոնֆերանսի նախօրյակին ստեղծված իրադրությունը թուրքանպաստ էր (էջ 150):

Հեղինակը պատճառաբանված անդրադարձ է կատարում նույն օրերին Լոնդոնում ընթացող խորհրդածողովին, նշում, որ Անկարայի համար այն ուներ ավելի մեծ նշանակություն, քան Մոսկվայինը, քանի որ այնտեղ Թուրքիայի գերնպատակը Մերի պայմանագիրն ի չիք դարձնել էր (էջ 153): Կարևոր է հեղինակի այն նշումը, որ այդ հանգամանքը հարկադրեց խորհրդային կառավարությանը՝ Մոսկվայի բանակցություններում ավելի մեծ զիջումների գնալ հօգուտ Թուրքիայի (էջ 191):

Դիպուկ կերպով նկատելով, որ խորհրդա-քեմալական բարեկամությունն ու եղբայրությունը, ինչպիսին հորջորջում էր Մոսկվայի պայմանագիրը, իրականում կեղծ էր ու շինծու, հեղինակը հողված առ հողված, հատված առ հատված ներկայացնում է այն՝ նրա հակահայկական էությունը բացահայտելու նկատառումով: Ցույց է տրվում, որ պայմանագրի առաջին հողվածի առաջին հատվածն ուղղված էր Մերի պայմանագրի դեմ, իսկ երկրորդ պարբերությամբ խորհրդային կողմը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», որի համաձայն «Թուրքիա» հասկացության տակ

ճանաչվում էին մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը գոյություն ունեցող սահմանները:

Հողվածների վերլուծությամբ ցույց է տրվում, որ Բայթումին ու շրջակա տարածքը Վրաստանին զիջելով՝ թուրքերը, փաստորեն, Հայաստանի հաշվին ստանում էին փոխհատուցում՝ Մուրմալուի գավառը Մասիսներով, Կողբով ու Բզդիլով (էջ 198): Հայաստանը կորցնում էր 20 հազար քառակուսի կիլոմետրից ավելի տարածքով Կարսի մարզը և Մուրմալուի գավառը, իսկ 5,5 հազար քառակուսի կիլոմետր կազմող Նախիջևանի մարզը հանձնվեց Ադրբեջանին (էջ 199):

Ուշադրության արժանի է հեղինակի այն միտքը, թե Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը որոշակի նպատակադրված հակահայ քաղաքականության միտում չի ունեցել, պարզապես մեծ քաղաքականության ճանապարհի խաչմերուկում հայտնվեց Հայաստանը, ուստի նա պետք է գնար պահանջված գոհողությունների ու մեծ կորուստների:

Պարզաբանելով այն հարցը, թե իրականում ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի նաակ-հեռագիրը ինչ դեր է կատարել Խորհրդային Հայաստանի պատվիրակության՝ կոնֆերանսին չմասնակցելու գործում, հեղինակը, ցույց է տալիս, որ հայկական պատվիրակությանը արգելվել է կոնֆերանսին մասնակցել դրանից 15 օր առաջ, միաժամանակ գտնելով, որ դա Ս. Վրացյանին չի փրկում բարոյական և քաղաքական պատասխանատվությունից: Նա, իրավամբ, դատապարտելի է համարում նաև ՀՓԿ և նրա պաշտոնաթերթի թուրքամետ քաղաքական կողմնորոշումը (էջ 201):

Հեղինակը ցույց է տալիս, որ միջազգային իրավական տեսակետից Մոսկվայի պայմանագիրը Հայաստանին վերաբերող մասով հակասում է ընդունված հիմնական նորմերին, այն ի սկզբանե անօրինական ու անվավեր էր և չի կարող պարտավորություն պարունակել ներկայիս Հայաստանի Հանրապետության համար ու որոշել հայ-թուրքական պետական սահմանը (էջ 217):

Հանգամանորեն քննարկելով թուրքանդրկովկասյան կոնֆերանսի դիվանագի-

տական նախապատրաստման հարցերը, Ա. Հակոբյանը գտնում է, որ այդ փուլը թուրքերի կողմից ձգձգվեց շուրջ յոթ ամիս, մինչև որ նրանք հույների դեմ վճռական հաղթանակ տարան, որը և նպաստավոր հող ստեղծեց Կարսի կոնֆերանսում թուրքերի անզիջող կեցվածքի համար (էջ 254, 255):

Մանրամասնորեն ներկայացվում են հայկական կողմի ապարդյուն ճիգերը՝ Անիի ավերակները Հայաստանին թողնելու ուղղությամբ:

Հողված առ հողված քննարկելով Կարսի պայմանագիրը, հեղինակը եզրակացնում է, որ դրա կառուցվածքը, բնույթն ու բովանդակությունը կանխորոշեց Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը, ուստի նա անտեղի է համարում կշտամբել Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մոավյանին, որովհետև ոչ ոք ոչինչ չէր կարող փոխել հոգուտ Հայաստանի (էջ 295):

Գրախոսվող մենագրության գիտական արժեքը մեծանում է նաև նրանով, որ գրքում զետեղված են ճանաչված քարտեզագետ Բ. Հարությունյանի հեղինակած երեք քարտեզներ, որոնցում ներկայացված են Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով անցկացված սահմանագծերն ու տարածքային փոփոխությունները:

Համադրելով պատմական փաստերը, հեղինակը գտնում է, որ Կարսի պայմանագիրը չունի միջազգային իրավական ուժ, իսկ ամենաաղաղակող անարդարությունը Սուրմալուի գավառը և Երևանի գավառի մի մասը Թուրքիային հանձնելն է (էջ 311):

Աշխատության ավարտին հեղինակի ամփոփիչ եզրակացությունն այն է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունը և համայն հայությունն ունեն պատմական, քաղաքական և իրավական բավարար հիմքեր ու փաստարկներ՝ պետական մակարդակով միջազգային դատական ատյաններ բարձրացնելու և քննարկելու խնդրո առարկա պայմանագրերի օրինակության հարցը և պահանջատեր լինելու իրենց ոտնահարված իրավունքներին ու բռնազավթված հողերին (էջ 330): Մնում է

ճիշտ որոշել նման հարցեր բարձրացնելու ժամանակը:

Վերջում կցանկանալինք արտահայտել մի քանի դիտողություններ ու նկատառումներ:

Կարելի է, իհարկե, չհամաձայնել հեղինակի որոշ մտքերի ու ձևակերպումների հետ, որոնք, սակայն, որակ չեն կազմում և որնէ չափով չեն խաթարում գրքի թողած հիանալի տպավորությունը:

Այսպես՝ տարբեր առիթներով շեշտադրվում է բոլշևիկյան Ռուսաստանի կողմից համաշխարհային հեղափոխությունը Թուրքիայում և առհասարակ Արևելքում տարածելու հանգամանքը, որի պատճառով էլ, իբր, նա Հայաստանի հաշվին գնում էր մեծ զոհողությունների ու զիջումների: Մինչդեռ, մեր կարծիքով, տվյալ ժամանակահատվածում այդ գաղափարն արդեն առաջնային չէր, և Խորհրդային Ռուսաստանի գլխավոր մտահոգությունը Թուրքիայի՝ Անգլիայի գիրկը նետվելը թույլ չտալն էր, որը նույնպես հիշատակվում է գրքում:

Մենք չենք կիսում հեղինակի անվերապահ համերաշխությունը այն հեղինակների հետ, ովքեր Մոսկվայի պայմանագիրը որակում են իբրև «դավադիր գործարք» ընդդեմ Հայաստանի: Մեզ համար հավասարապես ընդունելի չէ նաև «Հայաստանի բաժանում» հասկացությունը:

Հասկանալի չէ հեղինակի մեղադրանքը, թե մինչև նոյեմբերի սկիզբը ՌՄՖՄՆՆ - կառավարությունը գործնականում ոչ մի անգամ քեմալականներից չպահանջեց Հայաստանի վրա հետագա հարձակման դադարեցում (էջ 35): Իսկ ինչո՞ւ պետք է պահանջեր:

Նկատելի է դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի գերազնահատում (էջ 54), հաշվի չի առնվում այդ փաստաթղթի վերջնագրային բնույթը:

Ա. Հակոբյանն անտեղի է համարում ակադեմիկոս Գ. Գալոյանի այն պնդումը, թե 1920 թ. օգոստոսի 24-ի ռուս-թուրքական նախաստորագրված պայմանագրի նախագիծն այդպես էլ պայմանագրի չվերածվեց: Մինչդեռ փաստ է, որ նման պայմանագիր չստորագրվեց, որովհետև ռուսները չհրաժարվեցին Արևմտյան Հայաստանի որոշ

տարածքներ (Վան, Մուշ, Բիթլիս) Հայաստանի Հանրապետությանը միացնելու պահանջից:

Դժվար է համաձայնվել հեղինակի այն արտահայտությանը, թե Ռուսաստանը Թուրքիային ցույց տվեց ռազմաֆինանսական հսկայածավալ օգնություն (էջ 196): Մեր առարկությունը վերաբերում է «հսկայածավալ» բառին: Նման օգնություն, անշուշտ, եղել է, բայց ոչ հսկայածավալ:

Այդուհանդերձ, Արարատ Հակոբյանի նոր գիրքը շարադրված է գիտատեսական,

քննական-վերլուծական բարձր մակարդակով: Մենագրությունը հրատապ և արդիական է ներկայումս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ու սահմանների բացման խնդիրների հետ կապված քննարկումների առնչությամբ: Մեր կարծիքով, սույն ուսումնասիրությունը լուրջ ներդրում է մեր պատմագիտության մեջ և սեղանի գիրք կարող է լինել յուրաքանչյուր հայ մարդու համար:

ՄՆԵՐ ԿԱՐԱՊԵՏՑԱՆ